# Լոս Անջելեսի շրջանի փոքր բիզնեսի կայունության հիմնադրամ. Դիմումի ուղեցույց

department of economic opportunity

COUNTY OF LOS ANGELES

# Ծրագրի ընդհանուր նկարագրությունը

**Լոս Անջելեսի շրջանի փոքր բիզնեսի կայունության հիմնադրամը** (SBRF) Լոս Անջելեսի շրջանի Տնտեսական հնարավորությունների վարչության դրամաշնորհային ծրագիր է, որը տրամադրում է մինչև 5,000 ԱՄՆ դոլար ֆինանսական աջակցություն այն փոքր բիզնեսներին, որոնք միգրացիոն հսկողության գործողությունների հետևանքով 2025թ. հունիսից սկսած բախվել են աշխատուժի կորստի, հաճախորդների թվի նվազման, գույքի վնասման կամ եկամուտների կորստի: Այս աջակցությունը նախատեսված է օգնելու բիզնեսներին վերականգնվել անսպասելի իրադարձություններից, որոնք խաթարել են նրանց գործունեությունը:

Դիմումները կընդունվեն **2025 թ. սեպտեմբերի 29-ից, ժամը** 09:00-**ից** (PST), **մինչև 2025 թ. հոկտեմբերի 31-ը, ժամը** 17:00-**ը** (PST): Դիմումի լրացումը կպահանջի մոտավորապես 15-20 րոպե: Դիմումը հնարավոր է պահպանել ու շարունակել ավելի ուշ:

## Իրավասու լինելու համար պահանջները

**Իրավասու բիզնեսների թվում են սեփական խանութներ ունեցող ավանդական բիզնեսները, անկախ կապալառուները, շարժական վաճառողները և այն տնային բիզնեսները, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին.**

- Տուժել են միգրացիոն հսկողության գործողություններից,
- Գլխավոր գրասենյակը գտնվում է Կալիֆոռնիայում և գործել է Լոս Անջելեսի շրջանում նախքան 2025 թվականի հունիսի 1-ը,
- Տարեկան համախառն եկամուտը չի գերազանցում 6 միլիոն ԱՄՆ դոլարը,
- Ունի առավելագույնը 100 աշխատող,
- Դրամաշնորհի դիմորդը պետք է լինի բիզնեսի մեծամասնության սեփականատերը,
- Բիզնեսը 2024թ. հարկային տարում հանդիսացել է սեփականատիրոջ հիմնական եկամտի աղբյուրը,
- Բիզնեսը պետք է լինի ակտիվ և գործող, ինչպես նաև լավ համբավ ունենա տեղական, նահանգային և դաշնային հարկային և լիցենզավորման մարմինների հետ,
- Բիզնեսը չի դասվում ոչ իրավասու բիզնեսների դասին:

## Որտեղ դիմել

Դուք կարող եք դիմել առցանց հետևյալ հղումով՝ https://lacsmallbizresiliency.aidkit.org/apply

💡 Օգնության կարի՞ք ունեք: Եթե տեխնիկական խնդիրներ ունեք դիմումը ներկայացնելիս կամ ունեք ընդհանուր հարցեր, կարող եք կապ հաստատել AidKit-ի աջակցության թիմի հետ

📞 Զանգահարելով կամ գրելով՝ (213) 770-6148 կամ
✉️ Էլ. հասցե՝ support@lacsmallbizresiliency.aidkit.org

Ընդհանուր հարցերի դեպքում կարող եք կապնվել նաև Փոքր բիզնեսի գրասենյակի հետ

📞 Զանգահարելով՝ (844)-432-4900 (ժամերը՝ 8:30–16:00) կամ
✉️ Էլ. հասցե՝ osb@opportunity.lacounty.gov

## Ֆինանսավորման մանրամասները

Իրավասու դիմումները կվերանայվեն և կգնահատվեն՝ հիմք ընդունելով Լոս Անջելեսի շրջանի կողմից սահմանած չափանիշները: Եթե մի քանի դիմորդներ ստանան նույն միավորները, հաղթողը որոշվելու է վիճակահանությամբ:

Իրավասու բիզնեսները կարող են ստանալ մինչև **5,000 ԱՄՆ դոլար** աջակցություն, եթե գործում են վաճառասրահ ունեցող առևտրային տարածքից, կամ մինչև **2,500 ԱՄՆ դոլար,** եթե գործում են որպես անկախ կապալառու, փողոցում վաճառող կամ իրավասու տնային բիզնես:

Դրամաշնորհների տրամադրման ծանուցումները նախատեսվում է ուղարկել **2025թ. նոյեմբերի վերջին / դեկտեմբերի ընթացքում,** դիմումների վերանայման և ընտրության գործընթացից հետո:

## Դիմումը լրացնելու համար պահանջվող փաստաթղթերը

- Դիմելու համար պահանջվում են որոշակի փաստաթղթեր:
- Բոլոր փաստաթղթերում պետք է հստակ նշված լինի ձեր բիզնեսի անունը և հիմնական տվյալները:
- Եթե չունեք պահանջվող որևէ փաստաթուղթ, դիմումը կդադարեցվի, և դուք չեք կարողանա այն ավարտել:
- Կարող եք դիմել հաստատված Համայնքային Բիզնես Կազմակերպությանը (CBO)՝ անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու համար:

Ընդհանուր հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել նաև Փոքր բիզնեսի գրասենյակի հետ, սակայն դիմումը չի կարող լրացվել, քանի դեռ յուրաքանչյուր բաժնում չեք վերբեռնել պահանջվող փաստաթուղթը(երը):

Դիտեք պահանջվող փաստաթղթերի ամբողջական ցանկն [այստեղ:](#)

# Ոչ իրավասու բիզնեսները

- Ոչ առևտրային կազմակերպություններ (ներառյալ եկեղեցիներ կամ այլ կրոնական կազմակերպություններ)
- Վարձատուներ (պասիվ եկամուտ E գրաֆիկով),
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ձեռնարկություններ կամ ընկերություններ,
- Ավանդական բիզնեսները, որոնք որպես հասցե օգտագործում են միայն փոստային արկղը, գործում են ժամանակավոր համատեղ օգտագործման տարածքից (օրինակ՝ WeWorks) և այլն,
- Մասնագիտական ծառայություններ մատուցող բիզնեսներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ իրավաբանական, հաշվապահական և անշարժ գույքի ծառայությունների մատուցումը,
- Թմրանյութեր կամ դրանց պարագաները վաճառող բիզնեսներ (ներառյալ խմիչքի խանութներ և ծխախոտի խանութներ)
- Կորպորատիվ սեփականությամբ գտնվող ֆրանչայզներ,
- Մասնավոր սոցիալական ակումբներ,
- Արագ վարկերի տրամադրման խանութներ, գրավատներ և վարկային գործունեությամբ զբաղվող այլ ընկերություններ (օր.՝ բանկեր, ֆինանսական ընկերություններ կամ ցանկացած այլ կազմակերպություն, որի հիմնական առևտուրը փողն է),
- Ենթադրական գործունեությամբ զբաղվող ընկերություններ (օրինակ՝ ցերեկային առևտուր, ֆոնդային շուկայի բրոքերներ),
- Ապահովագրական ընկերություններ (կյանքի, ավտոմեքենայի, տան, գրավադիմումների և նմանատիպ այլ ապահովագրություններ),
- Աստղագուշակություն, ձեռքի գուշակություն, տարո և այլն,
- Գիշերային ակումբներ, մեծահասակների գրախանութներ և ցանկացած հաստատություն, որտեղ անցկացվում են կենդանի ներկայացումներ կամ այլ սեռական բնույթի ներկայացումներ,
- Խաղատնային բիզնեսներ (օր.՝ մրցարշավային խաղադրույքներ, կազինոներ, բինգո սրահներ),
- Կցորդների պահեստավորման տարածքներ և աղբավայրեր,
- Զենքի կամ զինամթերքի խանութներ,
- Բազմակի վաճառքի բաշխում և բազմամակարդակ մարքեթինգ,
- Լոբբիստական ընկերություններ կամ բիզնեսներ, որոնք իրենց ժամանակի կամ ռեսուրսների 50%-ը կամ ավելին նվիրում են լոբբիստական գործունեությանը,
- Կառավարական գրասենյակներ կամ գործակալություններ,
- Այլ բիզնեսներ, որոնք DEO-ի կողմից կարող են ճանաչվել որպես ոչ իրավասու՝ համաձայն դիմողի ներկայացրած տեղեկությունների:

# Դիմումի լրացումը

department
of economic
opportunity

COUNTY OF LOS ANGELES

# Ինչպե՞ս սկսել դիմումը

- Այցելեք դիմումի լրացման կայք՝ [https://lacsmallbizresiliency.aidkit.org/apply](https://lacsmallbizresiliency.aidkit.org/apply)
- Լրացրեք հետևյալ քայլերը՝ նոր դիմում սկսելու համար



## Քայլ 1: Բարի գալուստ

Դիմումը լրացնելու համար ընտրեք ձեր նախընտրած լեզուն (անգլերեն կամ իսպաներեն):



# Քայլ 1: Բարի գալուստ

**Դիմումի մեկնարկը**

Երբ պատրաստ լինեք սկսել, ընտրեք *Հաջորդը* կամ *Սկսել նոր դիմումը*:

**Դիմումի վերսկսումը** Նախկինում սկսված դիմումը վերսկսելու համար ընտրեք *Վերսկսել նախորդ դիմումը*: Այնուհետև մուտքագրեք այն հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, որը դուք օգտագործել եք դիմումը սկսելիս: Ձեր կոնտակտային տվյալները վեցանիշ կոդով ստուգելուց հետո ձեզ կառաջարկվի վերսկսել դիմումը և շարունակել այնտեղից, որտեղից դադարեցրել էիք:



## Քայլ 2. Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)

Վերանայեք ամենահաճախ տրվող հարցերը (ՀՏՀ)՝ դիմումի գործընթացին նախապատրաստվելու համար:

ՀՏՀ-ն կարող եք նաև գտնել այստեղ՝ https://lacsmallbizresiliency.aidkit.org/p/faqs

Դիտեք անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական ցանկն այստեղ:



# Քայլ 3. Համաձայնություն դիմելու համար

Վերանայեք և ընդունեք ծրագրի տվյալների գաղտնիության քաղաքականությունը



## Consent to Apply

**Data Privacy**

- I authorize AidKit, Southern California Grantmakers, and Los Angeles County's Department of Economic Opportunity to collect and use my personal information for the purpose of verification and fraud prevention, program communications, eligibility determination, payment processing, evaluation of program impact, and improvement of the AidKit platform and future Los Angeles County programming.
- I authorize AidKit, Southern California Grantmakers, and Los Angeles County's Department of Economic Oppo contact information to reach out with additional i programs, and services related to the **LA County Resiliency Fund** and other programs offered by
- Personal information can include identity informa government ID, image/video), contact details, de employment data or my financial information.
- This information may be shared with program adı identity verification services, or payment process by the rules of applicable program or by law).
- I understand that my data will not be sold to adve party partners and that my privacy will be maintai be used to provide the program service describe application, improve features, and communicate to this application and to share information relate recovery services. I understand that my data will accordance with this policy and will not be used f purposes or sold to external advertisers.



**Your Privacy Acknowledgments**

We collect the information you provide to process your application and, if eligible, deliver program benefits. Please see our Privacy Policy for details on what data we collect, how we use it, and your privacy rights.

By moving forward with this application, you confirm:

- **I understand** I may request access to, correction of, or deletion of my information.
- **I understand** if deleting my data would prevent AidKit from delivering services, detecting fraud, or meeting legal requirements, my deletion requests may not be possible. AidKit will only retain what's necessary and will securely delete it once it is no longer required.
- **I understand** AidKit will not sell my personal information under any circumstances.
- **I understand** I may withdraw consent to receive program-related communications at any time by contacting privacy@aidkit.cloud.

*By moving forward with this application, I accept these terms, agree to receive program-related communications and acknowledge that AidKit will use my information to process my application and provide program services, as described in the Privacy Policy.*

○ Yes, I consent.
○ No, I do not consent.

# Քայլ 4. Կոնտակտային տվյալներ

Ներկայացրեք ձեր հիմնական կոնտակտային տվյալները:

- Նշեք ձեր ամբողջական օրինական անունը, ինչպես այն նշված է ձեր պետական ինքնության հաստատման փաստաթղթում:
- *Նշում. Այս դիմումը լրացնելու համար դուք պետք է լինեք բիզնեսի մեծամասնության սեփականատերը:*
- Նշեք ձեր ծննդյան ամսաթիվը (դիմումի լրացման համար դուք պետք է լինեք 18 տարեկան կամ ավելի):
- Նշեք ձեր հեռախոսահամարը (կօգտագործվի հաղորդակցության և վավերացման համար):
- Նշեք ձեր էլեկտրոնային հասցեն (դիմումի մասին թարմացումները կուղարկվեն նշված էլ. հասցեին):



## Քայլ 4. Կոնտակտային տվյալներ

Ձեզանից կխնդրվի հաստատել ներկայացված կոնտակտային տվյալները: Հաստատման կոդը կուղարկվի ձեր էլեկտրոնային հասցեին և հեռախոսահամարին:









# Քայլ 5. Ձեր բիզնեսի մասին

Այս բաժնում դուք պետք է ներկայացնեք ձեր բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ: Եթե ձեր պատասխանները ցույց տան, որ ձեր բիզնեսը **չի** համապատասխանում ծրագրի ստանդարտ պահանջներին, դիմումի գործընթացը կդադարեցվի և դուք չեք կարողանա շարունակել:

Դուք պետք է պատասխանեք հետևյալ հարցերին՝

- Ձեր բիզնեսին հասցված ազդեցությունը և խափանման տեսակը,
- Ձեր բիզնեսի սեփականությունը, բիզնեսի տեսակը և օրինական կառուցվածքը,
- Ձեր բիզնեսի հասցեն և օրինական անունը, ինչպես նշված է հարկային կամ գրանցման փաստաթղթերում,
- Ձեր EIN և SOS համարները (եթե կիրառելի է ձեր բիզնեսի տեսակի համար),
- Ձեր և ձեր բիզնեսի ժողովրդագրական տվյալները,
- Ձեր ապահովագրական ծածկույթը, աշխատակիցների թիվը, տարեկան եկամուտը, ոլորտը, մատուցվող ծառայությունները և բիզնեսի կարգավիճակը:



## Քայլ 5. Ձեր բիզնեսի մասին

Այս բաժնում ձեզանից կխնդրվի նշել, թե որտեղ է հիմնականում գործում ձեր բիզնեսը: Հետագայում՝ դիմումի լրացման ընթացքում, ձեզանից կպահանջվի ներկայացնել հատուկ փաստաթղթեր՝ ձեր բիզնեսի տեսակը հաստատելու համար:

Խնդրում ենք ուշադիր կարդալ յուրաքանչյուր տարբերակ և հասկանալ, թե ինչպես է այն սահմանված ծրագրի կողմից, նախքան ընտրություն կատարե

Եթե ոչ մի տարբերակ չհամապատասխանի ձեր բիզնեսին, դիմեք AidKit աջակցման թիմին՝ (213) 770-6148 հեռախոսահամարով կամ support@lacsmallbizresiliency.aidkit.org էլեկտրոնային հասցեով՝ ուղեցույց ստանալու համար:
Ձեր դիմումը շարունակելու համար անհրաժեշտ է կատարել ընտրություն:

**Where do you mainly operate your business? (pick one)**

- (●) I **own or rent a space** *(not my home)* that customers visit regularly. I operate from a **brick and mortar commercial** location.
- ( ) I run my business **from my home**, and customers come to me there. I operate a **home-based business.**
- ( ) I **travel to meet my customers** where they are and don't have a fixed location. I operate as an **independent contractor** or **service provider.**
- ( ) I run a **sidewalk business** where customers come to me (truck, cart, stand, or market). I operate as a **sidewalk vendor.**
- ( ) I run my business **entirely online** and never meet customers in person. I operate an **online-only business.**

A **brick and mortar** commercial business means you own or rent a space outside of your home (you do not live there) where customers regularly visit.

For example, this could be a shop, restaurant, barbershop, salon, gym, studio, or office.

It must be **located in a commercial zone** and have an establishment license or permit to legally operate. Shared spaces such as WeWorks and P.O. Boxes do not qualify.

Please confirm this is your business type, or change your answer above. If none of the options seem to fit, reach out to us at (213) 770-6148 or support@lacsmallbizresiliency.aidkit.org before proceeding and we'll help you get it sorted.

# Փաստաթղթերի բեռնում

Դիմումի հաջորդ բաժնում դուք կբեռնեք փաստաթղթեր՝ ձեր բիզնեսի գործունեության և համապատասխանության ստուգման համար:
Դիմումի լրացումն ավարտելու համար անհրաժեշտ է բեռնել պահանջվող փաստաթղթերը: Բոլոր փաստաթղթերը պետք է համապատասխանեն դիմումում ներկայացված տեղեկատվությանը:
Եթե փաստաթուղթ չունեք, դիմումը կդադարեցվի: Դուք կարող եք վերադառնալ ցանկացած պահի մինչև դիմումը ներկայացնելու վերջնաժամկետը՝ 2025 թվականի հոկտեմբերի 31-ը, ժամը 17:00-ն (PST), դիմումի լրացումն ավարտելու համար: Եթե չվերադառնաք փաստաթղթերը վերբեռնելու համար նախքան վերջնաժամկետը, ձեր դիմումը չի ընդունվի:

Դիմումը ներկայացնելուց հետո դուք չեք կարող կրկին մուտք գործել ձեր դիմում՝ փաստաթուղթը թարմացնելու կամ փոփոխելու համար: Ուղարկելուց առաջ համոզվեք, որ բոլոր փաստաթղթերը ճշգրիտ են: Եթե դիմումն ընտրվի գնահատման համար, մեզ կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ տեղեկություններ փաստաթղթի վերաբերյալ:

Եթե ձեզ օգնություն է անհրաժեշտ ձեր իրավասությունը կամ փաստաթղթի ընդունման գործընթացը հասկանալու համար, կարող եք զանգահարել Լոս Անջելեսի շրջանի Փոքր բիզնեսի գրասենյակ՝ (844) 432-4900 լրացուցիչ աջակցության համար: Նրանք չեն կարող լրացնել ձեր դիմումը կամ շրջանցել փաստաթղթերի հավաքագրման գործընթացը, բայց կարող են օգնել հասկանալու, արդյոք ձեր փաստաթուղթը ընդունելի է ծրագրի համար:

Սեղմեք այստեղ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը դիտելու համար:

# Քայլ 6. Ինքնության հաստատման փաստաթղթերի հավաքագրում

Այս բաժնում ձեզանից կխնդրվի բեռնել փաստաթղթեր՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:

Ինքնության վավերացման գործընթացն ավարտելու համար կպահանջվի կատարել կենդանի (live) լուսանկար: Դուք կարող եք հղում ստանալ դա անելու համար, որը կուղարկվի SMS-ով կամ էլ. հասցեով, կամ կարող եք կատարել գործընթացը ձեր համակարգչից:

Պահանջվող փաստաթղթերի ամբողջական ցանկը կարող եք տեսնել այստեղ:









# Քայլ 6. Բիզնեսի վերաբերյալ փաստաթղթերի հավաքագրում

Այս բաժնում ձեզանից կխնդրվի բեռնել փաստաթղթեր՝ ձեր բիզնես գործունեությունն ու իրավասությունը հաստատելու համար: Եթե դուք փողոցում վաճառող կամ շարժական բիզնեսի տեր եք, կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել ձեր փաստաթղթերի բեռնման վերաբերյալ այս ուղեցույցի հաջորդ էջում:
Հաստատման համար անհրաժեշտ է վերբեռնել հետևյալ փաստաթղթերը:

- Բիզնեսի մեծամասնության սեփականություն և հիմնական եկամուտի աղբյուրը
- Տարեկան եկամուտը՝ մինչև 6 միլիոն դոլար կամ ավելի քիչ
- Բիզնեսի չափը՝ 100-ից քիչ աշխատակիցներով
- Բիզնեսի գտնվելու վայրը՝ ազդեցություն կրած տարածքում
- Գործում է ընտրված բիզնեսի տեսակից
- Լավ համբավ հարկային և լիցենզավորման մարմինների մոտ

Պահանջվող փաստաթղթերի ամբողջական ցանկը

կարող եք տեսնել [այստեղ:]


Business Document Collection

**Important Information About Document Uploads.**

**Documents are required to complete this application.**
If you need to pause your application to gather your documents, you can return at any time to upload it. The application will resume where you left off.

For each document requested, you will be asked if you have the document to upload now or if you need help from a staff member in person. If you choose to get support from a staff member, your application will pause while you go in-person to receive help. **Please note**, if you go in-person for assistance, you will **still be required to upload all required documentation** for this application by the application deadline.

Once you submit your application, you will not be able to make changes or upload additional documents.

**TIP:** To ensure that your application is processed in a timely manner, if taking a picture of your documents, please hold your documents upright and within the frame. If your document is blurry, please retake the picture.


**We need to gather documentation to verify that your business was operating prior to June 1, 2025, earned less than $6 million in gross revenue, and that you are the majority owner.**

**To verify this information we need your 2023 or 2024 tax return including your schedule C, showing:**

- Owner's full name
- Business name
- Business address
- Gross receipts or business income (even if $0, indicates business was active or maintained)
- Ownership status (Schedule C)

**Do you have your 2023 or 2024 tax document?**

- Yes, I have my tax document
- No, I do not. I will call the LA County Office of Small Business at (844) 432-4900 for additional support.
- No, I do not. My business has been open less than 1 year and I have not yet filed this tax document

**Upload your document(s) here.**

*NOTE: You may only upload 20 pages at a time. If you need to upload more than 20 pages, you will need to separate them into different documents and upload them separately.*

Upload Document | Take Photo

Select or drag files here to upload

## Քայլ 6. Գործարար փաստաթղթերի հավաքագրում (փողոցում վաճառողներ և շարժական բիզնեսներ)

Բոլոր փողոցում վաճառողները ու շարժական բիզնեսները պետք է անցնեն **անձնական ստուգում** մեր գործընկերներից մեկի հետ՝ բիզնեսի հիմնական մանրամասները հաստատելու և դիմումը մշակելու համար:

**Առանց այս ստուգման ձեր դիմումը կմերժվի:**

Դուք կարող եք նաև **վերբեռնել լրացուցիչ փաստաթղթեր**՝ ձեր բիզնեսը հետագայում ստուգելու համար: Սա չի երաշխավորում ֆինանսավորումը, բայց մեծացնում է ֆինանսավորում ստանալու ձեր հնարավորությունները: Եթե դուք ունեք այս փաստաթղթերը, մենք խորհուրդ ենք տալիս վերբեռնել դրանք:

**Կարող եք ըստ ցանկության վերբեռնել՝**

- Կալիֆոռնիայի վաճառողի թույլտվությունը
- Կեղծ բիզնեսի անվանման (DBA) գրանցում
  - Պետք է տրված կամ երկարաձգված լինի վերջին 5 տարվա ընթացքում
- Լոս Անջելեսի շրջանի մայթեզրին վաճառքի գրանցման վկայական (SVRC)
  - Պետք է տրված կամ երկարաձգված լինի վերջին 12 ամսվա ընթացքում
- Լոս Անջելեսի շրջանի քաղաքից մայթեզրին վաճառքի թույլտվություն (օրինակ՝ StreetsLA-ից Լոս Անջելես քաղաքի մայթեզրի և այգում վաճառքի թույլտվություն)
  - Պետք է տրված կամ երկարաձգված լինի վերջին 12 ամսվա ընթացքում
- Լոս Անջելեսի շրջանի հանրային առողջապահության վաճառքի թույլտվություն (կոմպակտ շարժական սննդի կետ - CMFO):
  - Պետք է տրված կամ երկարաձգված լինի վերջին 12 ամսվա ընթացքում:



## Քայլ 7. Հարցում AidKit-ի օգտագործման ձեր փորձի վերաբերյալ

Նախքան ձեր դիմումի վերանայումը, ձեզնից կպահանջվի լրացնել կամավոր հարցում՝ AidKit հարթակի օգտագործման ձեր փորձի վերաբերյալ:

AidKit-ը տեխնոլոգիական ընկերություն է, որը կառավարում է ծրագրի դիմումը և ուղարկում վճարումներ:

Ձեր կարծիքը կօգնի AidKit-ին տրամադրել դրական, պարզ և օգտակար փորձ ապագա հասցեատերերի համար: Հարցերին պատասխանելը կտևի ոչ ավելի, քան 3 րոպե:

Այս հարցերը պարտադիր չեն, և ձեր պատասխանները չեն ազդի ծրագրին ձեր իրավասության վրա: Եթե ցանկանում եք բաց թողնել հարցերը, պարզապես սեղմեք «*Հաջորդը*»:



# Քայլ 8. Վերանայել և ուղարկել

- Ուշադիր ստուգեք բոլոր մուտքագրված տեղեկությունների ճշգրտությունը:
- Լրացրեք հաստատումը՝ ձեր գիտելիքների չափով նշելով, որ մուտքագրված բոլոր տեղեկությունները ճշմարիտ են և ճշգրիտ:
- Որոշ բիզնեսներ կարող են ստիպված լինել անձամբ այցելել Համայնքային բիզնեսի կազմակերպություն (CBO)՝ իրենց դիմումի ստուգումն ավարտելու համար: Այս գործընթացի մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք տեսնել այս ուղեցույցի հաջորդ էջում:
- **Նշում.** Դիմումը ներկայացնելուց հետո դուք չեք կարող կրկին մուտք գործել՝ փոփոխություններ կատարելու համար: Ուղարկելուց առաջ համոզվեք, որ բոլոր մուտքագրված տեղեկությունները և վերբեռնված փաստաթղթերը ճիշտ են:



# Քայլ 8. CBO ստուգում

- Դաշնային վերահսկողության տարածքներից դուրս գործող դիմորդները և բոլոր մայթեզրին վաճառողները **պարտավոր** կլինեն անձամբ ավարտել ստուգումը Համայնքային կազմակերպությունում (CBO):
- Եթե ձեզանից պահանջվում է անել դա, ձեր դիմումի «Վերանայում և ուղարկում» բաժնում կտեսնեք ուղեցույց, որտեղ մանրամասն բացատրվում է, թե ինչու է սա պահանջվում ձեր բիզնեսի համար և ինչ քայլեր պետք է ձեռնարկել:
- CBO ստուգումը **պետք է ավարտվի** մինչև դիմումի ներկայացման **վերջնաժամկետը**՝ հոկտեմբերի 31-ը, ուրբաթ, ժամը 17:00-ն (PST), **հակառակ դեպքում ձեր դիմումը չի ընդունվի:**
- Եթե CBO ստուգում անհրաժեշտ լինի, դուք կստանաք էլ. նամակ՝ ավելի մանրամասն տեղեկություններով և մասնակից CBO-ների ցանկով: Աջակցություն ստանալու համար դուք պետք է այդ էլ.նամակը ցույց տար CBO գործընկերոջը:
- Ձեր դիմումը կներկայացվի որպես ընթացքի մեջ մինչև այս քայլի ավարտը:



## Քայլ 8: Վերանայել և ուղարկել

Սեղմեք «Ուղարկել», երբ ամեն ինչ վերանայեք:

Ուղարկելուց հետո դուք կստանաք էլեկտրոնային նամակ, որը կհաստատի ձեր դիմումի ստացումը և ձեր բիզնեսի համար անհրաժեշտ հետագա քայլերը:

Էլեկտրոնային նամակները կուղարկվեն support@lacsmallbizresiliency.aidkit.org հասցեից:



# Աջակցություն և օգնություն

💡 **Օգնության կարի՞ք ունեք:** Եթե տեխնիկական դժվարություններ ունեք դիմումը ներկայացնելիս կամ ունեք ընդհանուր հարցեր, կարող եք կապվել AidKit աջակցման թիմի հետ՝

Զանգահարեք կամ գրեք՝ (213) 770-6148 կամ
Էլ. հասցե՝ support@lacsmallbizresiliency.aidkit.org

Կարող եք նաև կապվել Փոքր բիզնեսի գրասենյակի հետ ընդհանուր աջակցության համար՝
4716 E. Cesar E. Chavez, Los Angeles, CA 90022.
Հեռ.՝ (844)-432-4900 (8:30-16:00) կամ
Էլ. հասցե՝ osb@opportunity.lacounty.gov.

# Վերջնական Հիշեցումներ

✅ Դիմումները պետք է լրացվեն մինչև հոկտեմբերի 31-ը, ուրբաթ օրը, ժամը 17:00 PST: Այս ժամից հետո ոչ մի նոր դիմում չի կարող սկսվել կամ շարունակվել:

✅ Հանձնված դիմումնե որը հնարավոր չէ խմբագրել:

✅ Ներդրված միջոցները սահմանափակ են և չեն երաշխավորվում:

✅ Եղեք տեղեկացված. հետագա թարմացումները կարող են ուղարկվել էլ.

փոստով կամ հաղորդագրությամբ:.

**Հետևելով այս ուղեցույցին՝ դուք կհասկանաք, թե ինչ է պահանջվում և ավելի սահուն կանցնի դիմումի ներկայացման գործընթացը:**
**Եթե ունեք որևէ հարց, խնդրում ենք դիմել օգնության համար:**

department of economic opportunity
COUNTY OF LOS ANGELES